

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ «ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ» (1800-1803) ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Ի տարբերութիւն աշխարհագրական սահմաններով երի-
զուող հայրենիքի, ոգու հայրենիքը սահմաններ չի ճանաչում:
Մեր պատմական ճակատագիրն ունեցող ժողովոդի համար ոգու
հայրենիքի շառաւիղները կարող են ձգուել մինչեւ Կեսարիա ու
Սամսսատ, Ամստերդամ ու Մադրաս ու էլի այլ միջօրէականներ:
ԺԼ դարի շեմին խնկելի սրբավայրերի շարքը հարստացաւ եւս
մէկով սուրբ Ղազարով: Ինչպէս նախորդներից, այնպէս էլ յետ-
նորդներից հոգեւոր, գիտա-մշակութային այս օջախը պէտք է
տարբերուէլ այստեղ ծուարած մի բուռ հոգեւորականների գոր-
ծունէութեան լայնածաւալ ու համակողմանի բնոյթով, նաեւ
հայկականութեան յարատեւութեամբ: Շատ սկիզբների սկիզբ
եղաւ սուրբ Ղազարը, ու զրանցից մէկը մամուլի սկիզբն էր: Հե-
ռաւոր Մագրասում խորհրդաւոր պայմաններում նոր էր լրել
«Ազդարարի» ձայնը, Միիթարեան հայրերի տպարանում 1800-ին
լուս աշխարհ եկաւ փոքր չափերով մի գիրք՝ «Տարեգրութիւն»¹
վերտառութեամբ, որին վերապահուած էր «Ազդարարի» հետ
միասին հայ լրագրութեան աւելի քան երկհարիւրամեայ պատ-
մութեան առաջին էջը լինելու: Անուանաթերթին Միիթարեան-

1 Մատենագիտութիւններում, գիտական աշխատանքներում իբրեւ «Տարե-
գրութեան» հրատարակութեան թուականներ յիշւում են 1799-1802, 1800-
1802 թուերը: Իրականում առաջին «տետրակը» լրյա է տեսել 1800-ին, վեր-
ջինը՝ 1803-ին: Շփոթութեան պատճառը, հաւանաբար, այն է, որ առաջին
«տետրակի» անուանաթերթին գրուած է՝ «տարեգրութիւն 1799 տարւոյն»:
Աւելի ներքեւում, սակայն, կարդում ենք՝ «Յամի տեառն 1800», բացի այդ՝
«տետրակում» նկարագրուող դէպքերը սկսում են «ի սկզբան... տարւոյն
1799» եւ աւարտում «Դեկտեմբերի մէջը յանկարծական» մահուան յիշա-
տակումներով: «Տարեգրութիւնը» լրյա է տեսել միաբանութեան առաջնորդ-
ների թոյլտուութեամբ՝ «հրամանաւ մեծաւորաց»:

ների զինանշանն էր՝ Ո(բդեգիր) Կ(ուսին) Վ(արդապետ) Ա(պաշխարութեան) սկզբնատառերով:

Տարեգիրքը մամուլի, թէ գրքի պատմութեան մէջ պէտք է քննարկել, մանաւանդ ինձիճեանի «Տարեգրութեան» դէպքում, երբ խմբագիրը զգուշաւոր կերպով «յօրինող» է կոչում, նկատի առնելով բոլոր նիւթերը նրա կողմից շարադրուած լինելու պարագան: Տարեգիրքը եթէ մամուլ է, ինչու նոյն խմբին չպէտք է դասուեն միջնադարեան ժամանակագրութիւնները, որոնք նոյն պէս կողմից յօրինուած նիւթերի շարքեր են: Այսպէս շարունակելու դէպքում կարելի է հասնել ուրարտական այն արձանագրութիւններին, որոնք որեւէ արքայի՝ իրար յաջորդող արշաւանքների քարագրումն են...

Զիսորանալով վիճայարոյց խնդրի մէջ՝ ընդգծենք, որ «Տարեգրութիւնը» մամուլի շարքը պէտք է դասել թերեւս այն յատակ տարբերութեան պատճառով, որ առկայ է տարեգրի եւ ժամանակագրի յօրինուածքների միջեւ: Հակառակ վերջինիս, որը հերթականութեամբ արձանագրում է բոլոր դէպքերը՝ առանց դրանք դասդասելու, տարեգիր Ղուկաս ինձիճեանը իր ընտրած թուականների իրադարձութիւնները բաժանում է խմբերի՝ քաղաքական, պատերազմական, եկեղեցական, բանասիրական (ինչպէս նաեւ սրանցից դուրս գտնուող նիւթերի մի ուղիչ բաժին՝ «դիպուածոց աշխարհի»)՝ ընթերցողին հնարաւորութիւն տալով իր որոնածը փնտուել իրական որեւէ հատուածում: Ամսագրի բաժինների նախատիպն է սա, յատկութիւն, որ տուեալ գործը մղում է դէպի մամուլի հունը:

Միանգամից չձեւաւորուեց «Տարեգրութեան» յիշեալ կառուցուածքը: Առաջին «տետրակը» համեստ մի գրքոյկ է, բաղկացած 46 էջից: «Յիշատակարան երեւելի անցից դիպելոց յաշխարհի ի սոյն ամի. կարգեալ ըստ աւուրց իւրաքանչիւր ամսոյ՝ յորում դիպան»,՝ անուանաթերթի այս ծրագրային յուշումը շարունակութիւն էլ ունի՝ «Յաւելեալ ի նմա եւ ընդհանուր աշխարհագրական տեղեկութիւն»: Երկրորդ տարուայ «տետրակն» առաջինի գրեթէ կրկնակի ծաւալին (72 էջ) աւելացնում է «երեւելի անցքերի» յատակ բաժանումներ՝ «Յիշատակարան քաղաքական, պատերազմական եւ բանասիրական անցից եւ դիպուածոց աշխարհի»՝ դարձեալ խստօրէն պահպանելով ներքին ժամանակագրութիւնը: Նոյն կերպ մանրամասնուում են նաեւ «ընդհանուր

աշխարհագրական տեղեկութիւնները» (թագաւորների անուններ ու տարիքներ, տէրութիւնների փոփոխութիւններ ու դաշինքներ, գիտութիւնների վիճակ, գիւտեր, արհեստներ, վաճառականութիւն): Երրորդ տարուայ տետրակում մեծ մի բաժին էլ է աւելանում՝ «Եկեղեցական»-ը: Նիւթերն արդէն շատ են, եւ տարեգիրքը լոյս է տեսնում երեք «տետրակներով» (Ա. պատերազմական վիճակ աշխարհիս (91 էջ), Բ. քաղաքական վիճակ աշխարհիս (63 էջ), Գ. եկեղեցական վիճակ աշխարհիս (10 էջ), Դ. բանասիրական վիճակ աշխարհիս (65 էջ) (վերջին երկուսը մէկ «տետրակում»): Երրորդ տարուայ տետրակն օժտուած է նաեւ ցանկով (ենթավերնագիրներով հանդերձ): Չորրորդ տարուայ «տետրակն» արդէն ըստ ամիսների է կազմուած (Յունուար 47 էջ, Փետրուար - 24 էջ):^{2*} «Տարեգրութիւնը», փաստօրէն, երեք տարուայ ընթացքում վերաճեց իւրայատուկ ամսագրի: Ուրեմն՝ շատ աւելի ճիշտ է այն մամուլի պատմութեան տիրոյթի մէջ առնելլը: Մանաւանդ՝ «Յառաջաբանութեան» մէջ խմբագիրը բացատրում է պարերականի նպատակը, հասկանալով այն իրեւ տեղմէկատուութիւն ստանալու «ամմէն մարդու» ցանկութեան իրականացում:

Խմբագիրը խոստովանում է «Տարեգրութեան» մի ուրիշ գործնական խնդիր էլ. «Եւ թէ որ ամմէն տարւան ելած տետրակը տարեգրութեան պահէ նէ, մէկ քանի տարւանէն ետքը, կունենայ... պատմական յիշատակարան մը» (1800, էջ 8): Դրա

² «Տարեգրութեան» հանրային գրադարանում պահպանուող միակ լուսատիպ օրինակում 1803 թուականի տպագրութիւնը աւարտում է Փետրուարով: Սա աւարտն է, թէ մեզանում պակասում է շարունակութիւնը: Դժուար է ասել, միաբանութեանն ուղղած նամակ-խնդրանքի պատասխանը չի ստացուել, մնում են միայն կոաչումները: Խնչէս եւ Ազգարարի» գէպօւմ, ոչինչ չի սպառնում կարծես հրատարակութեանը. յիշեալ գետրուարեան համարի վերջին էլում, որտեղ աւարտում է գրերի վերաբերեալ ընդարձակ մի յօդուած, կարդում ենք. «Մեր ընթերցողներուն թէ որ հաճոյ տեսնանք աս պզտի ճառս՝ որ գրի գիւտի վերայ համառօտելով մը խօսեցանք, ուրիշ անգամ մը թանաքի միւթալիի ինչդտար գիւտեր ինաստ եղերենէ՝ խօսենք» (1802, Փետրվար, էջ 24): Ասել է թէ՝ դադարի հեռաւոր վտանգ անդամ չի զգացում, ենթագրելի է, ուրեմն, որ մեզնում եղած օրինակը պահապառ է, մանաւանդ՝ պակասաւոր է «Տարեգրութեան» շարունակութիւն «Եղանակ թիւզանդեանը» եւս (մինչ 1811թ.):

Համար էլ պարբերականը ժամանակակից գրքի 84×108 1/32 չափի է: Յետագյում անձնական գրադարան ձեւառողելու այս խնդիրը մամուլը լուծելու էր թերթօնների եւ յաւելուածների ձեւով...

«Յառաջաբանութեան» մէջ ինձինձեանը բացայայտում է պարբերականի մի յատկանիշը եւս. նրանում ներկայացուած դիպուածները «երեւելի եւ ստոյգ» պիտի լինեն, նաեւ ամբողջական՝ «ինչղրատար որ եղան մէկ տարւան մէջ» (ն.տ., էջ 8): Հէնց այստեղ աւելացնենք, որ «երեւելի եւ ստոյգ» իրադարձութիւնների մասին հնարաւորինս ամբողջական տեղեկատուութիւն ընթերցողին հասցէազրում է բացառիկ առարկայականութեամբ: Այս մասին խմբագիրը չի յատարարում, դա անմիջապէս նկատում է ընթերցողը՝ «տետրակներին» ծանօթանալուց յետոյ:

Տեղեկատուութեան մասին ինձինձեանի հայեացքներն ամբողջացնելու համար յիշենք նրա մի պնդումը եւս՝ ամէն ինչ չէ, որ կարելի է եւ պէտք է քարոզել: Դժգոհելով Ֆրանսիայում ծնունդ առած յեղափոխական շարժումներից, որոնք դիտում է իբրեւ մարդկային չարութեան դրսեւորումներ (տրում են զեխութեան, «անկարգութեան վարուց»), խոր դժգոհութիւն է յայոնում բոլոր նրանցից, ովքեր «սկսան ջատագովել անկարգութիւնները, անհաւատութիւնները, որ չի ջատագովվկիր» (1800, էջ 5): Մերժում է «գէշ խօսքերը» (1803, Յունուար, էջ 11) ինչպէս տէրութիւնների յարաբերութիւններում, այնպէս էլ՝ «Տարեգրութեան» էջերում:

Ինչպէս կարելի է կռահել առանձին արտայայտութիւններից, բազմազան աղբիւրներ է օգտագործել, ինձինձեանը, համարդելու ու հակադրել՝ իր ըմբռնած նիշտն ու ճշգրիտը յայտնաբերելու եւ ընթերցողին հացնելու նպատակով: «Աս տարի ասոնք կը պատմըվին» (1801, Բ, էջ 65), իսկ «պաշտամանց սկզբնաւորութեան» մասին խօսելիս վեց-եօթ սկզբնալրիւր է յիշում (1803, Յունուար, էջ 12): Սա պարբերական ղեկավարելու կերպ էր ու եղանակ:

Ինձինձեան խմբագրի սկզբունքներից մէկն էլ ընթերցողի հետաքրքրասիրութեանը բաւարարութիւնը տալն էր, ընթերցողների տարբեր շերտերի նախասիրութիւնները հաշուի առնելը: «Տարեգրութեան» էջերում բաւականին տեղ էր յատկացւում

այսպէս կոչուած հետաքրքրաշարժ լուրերին, գիտութեան նորութիւններին: Պատկերացում կազմելու համար յիշենք մի քանի նմոյշ: Պատերազմներն ու խովութիւնները չեն կասեցնում մարդկանց հնարամտութիւնը «նոր նոր բան գտնալու»: Ամերիկայում, օրինակ, մէկը «բանճարէն... խաս չէքը հանեց», մէկ ուրիշը թղթի համար «ճերմակ լաթի կտորվանքները» փոխարինեց ծառերի կեղեւներով («ծառերու կեղեւներէ եւ ուռիչ»), «ինկիլիզները» ճրագի «տեղ ուրիշ բան վառել» սկսան, որ աւելի «աժան է»: «Մանօթութիւն գիտութեանց» բաժնում մի տեսակ միջազգային նորութիւններ են հաղորդուում, երբեմն՝ զգայացունց լուրեր, ընթերցման համար, բնականաբար, շատ հետաքրքիր: Փարիզում մի տիկին ճեմարան է բացել կանանց համար, նրանում 20 հազար «հատորի չափ մի գրքատուն» հիմնել, «անոնք որ կարողութիւն չունին՝ հոն գան՝ կարդան տէի» (1800, էջ 52): Ֆրանսացի որսորդներն անտառում «եապանի մարդ մը գտան, որ էր տղայ 12 տարվանի չափ», չէր խօսում, չէր լսում, մարդկանց կերակուրներից հրաժարուում էր՝ աչքը անտառին, «չորս ոտքով ծառին վրայ» ելաւ (ն.ա.): Եթէ «Տարեգրութիւնում» նկատելի է «յօրինողի» ճիպը՝ ներկայացնել հետաքրքրաշարժ դէպքեր եւս կամ հետաքրքիր ու համոզիչ դարձնել ներկայացուած դէպքն ու իրադարձութիւնը, ապա սրան յաջորդած «Եղանակ բիւզանդեան»-ի առաջին իսկ համարի առաջաբանում կայ ուղղակի խոստովանութիւն. «Ուգելով ստանալի մեր ազգին բանասէրները զրկեալ չիթողուլ ասանկ զուարճալի տեղեկութենէ, կըդնենք հոս աս տարի ան փոփոխութեանց գուշակութիւնը, ըլլալիքը՝ ու առաջուցմէ եղածը՝ ըստ երից ըջանակաց:

Ասիկայ զուարճութիւն մընէ...», բայց ոչ սովորական «գուարճութիւն»: Եղանակի գուշակութիւնը յենւում է մարդկութեան դարաւոր փորձին, տարբեր գիտութիւնների ձեռքբերումների համադրմանը: Դա իւրօրինակ զուարճութիւն է՝ «բանասիրական, բանալիք մէտէրական բնազննութեան, դուռն աստղագիտութեան, պատճառ եւ առիթ իմաստափրութեան, խափանումն ընդ ունայն եւ վնասակար խօսակցութեան» («Եղանակ բիւզանդեան», 1804, էջ 4), ասել է թէ՝ զուարճալին, հետաքրքրականն ու հետաքրքրաշարժը հանդէս են գալիս միասնաբար:

Այսպէս, ահա, մշակուում են մամուլի գերի ու նշանակութեան, տեղեկատուութեան իւրայատկութիւնների սկզբունքներ,

որոնք աւանդական պէտք է դառնային յետնորդների համար՝ անընդհատ հարստանալով ու նորանալով:

Ապրելով Եւրոպայի կենտրոնում, «Տարեգրութեան» խմբագիրը որդեգրում է քաղաքակիրթ լրագրագիտութեան առանձնայատկութիւններ՝ կանխորոշելով հայ մամուլի զարգացման յետադայ ընթացքը:

Մեզանում քիչ է գրուել այս հանդէսի մասին, գրուածն էլ չի առանձնացել անաշառութեամբ:

Պարբերականում մեծ թիւ են կազմում Եւրոպական տէրութիւններին նուիրուած պատմա-քաղաքական ակնարկները: Միանգամայն հասկանալի է, թէ ինչու իտալիայում ապրող հոգեւրականը մանրամասն տեսութեան նիւթ է դարձնում օսմանեան թագաւորների «կարգը»: «Տարեգրութիւնը» հրատարակում էր «ստանպօլի մեր ազգին» համար, որ գտնում էր օսմանցու տիրապետութեան տակ: «Ոչ ոք չէր պարտադրում վենետիկեան Մխիթարեաններին սոսկ անորոշ ու լակոնիկ տողեր նուիրել իտալական ժողովրդի պատմութեանը կամ մի քանի տողեր նուիրել արեւմտեան երկրներին, իսկ երկրագնդի ամենավայրագ պետութիւններից մէկի բռնապետ սուլթանների գործունէութեանը նուիրել մի քանի էջեր»³: Անհիմն է հետազոտողի յանդիմանութիւնը, նաեւ անարդար: Ճշմարտութեան հետ եղրեր չունեն այն պնդումները եւս, թէ «ակնածանքով է... յիշատակում առաջին սելջուկ տիրակալների անունները», «խանդաղատանքով է... արձանագրում թագաւորների շինարարական ձեռնարկները», «ներբող է ձօնում առանձնապէս Մեհմեմեդ Ֆաթիհին», «ոչ մի խօսք բռնութիւնների մասին» (ն.տ.): Այս ամէնից հետեւութիւն է արևում «Մխիթարեան միաբանութեան ղեկավարների» թուրքամէտ «գաղափարախօսութեան» մասին:

Ինճինեանն, այո, վարում է քաղաքականութիւն, որ հաւանաբար, «Մխիթարեան միաբանութեան ղեկավարների» քաղաքականութիւնն է, եւ դա զգուշալորութեան քաղաքականութիւնն է, «երկրագնդի ամենավայրագ պետութիւններից մէկի» վայրագութիւնը անտեղի եւ անզգոյշ խօսքով ժողովրդի դէմ չուղղելու

³ ԿԱՐԻՆԵԱՆ Ա., Ակմարկմեր հայ պարբերական մամուլի պատմութեան, Հ. 2-րդ, Երեւան, 1960, էջ 110:

քաղաքականութիւն։ Ակնածանքի, խանդաղատանքի, առաւել եւս ներբողի հետքեր չկան։ Մէջ բերենք կարինեանի ասածները իր բեւ թէ հաստատող հատուածը՝ ընթերցողին թողնելով եզրակացութիւնը, թէ որքանով է այն ներբող. «...Սէլիմ... 8 տարի 5 ամիս նստաւ... բարուք գրօսասէր. Գըպլըստան առաւ վենետիկցոցմէ... 1571 յաղթըվեցաւ վենետիկցոցմէ եւ այլ քրիստոնէից զօրաց. իր տակը առաւ Թիֆլիս, Շիրվան, Տէրպէնտ, Եկմէնին բերդերը եւ Թունուս։ Էթիլ գետը թէն գետին հետ ուղեց խառնել, 6 միլի չափ տեղ հրամայեց փորել... զանազան շնչներ շնեց կտրէնէ, Գրպըս, Քեապէին էթրաֆը 360 գմբէթ եւ այլն» (մէջ բերումը ըստ Ա. Կարինեանի.- Գ. Ա.):

Բազմակէտերը կրճատուած անհարկի մանրամասներին են փոխարինում: «Հրամայեց փորել» բառերից յետոյ, իբրեւ անհարկի մանրամասնութիւն, դուրս են ձգուած «եւ թէպէտ սկսան, բայց առաջ չի գնաց» նախադասութիւնները ...

Ձգտելով առարկայականութեան, ինձինեանը պարզապէս շարադրում է փաստերը՝ հանրագիտարանային յօդուածի հակիրճութեամբ, յիշելով արշաւանքները, յաղթանակները, պարտութիւնները եւս, շինարարական ձեռնարկումները (հիմնականում «ճամբի»-ներ), հարկերը, հաճովքով մոռացութեան չտալով նաեւ այսպիսի փաստերը, որոնք հետազոտողը չգիտես ինչու (կամ հասկանալի պատճառով) անտեսում է. «Լէնկ Թիմուրը բռնեց ասիկայ (Պայէզգիտ սուլթանին.- Գ.Ա.) երկթէ խաֆէսի մէջ դրաւ. հետը կպտտցնէր ինչվան մեռաւ» (1801, էջ 66), Մուսղաֆա սուլթանին «եէնիչչըիները իջեցուցին. եւ եէտի խուլէն խեղդամահ սպանին» (ն.տ., էջ 70), Սուլթան Մեհմեդին «վար իջեցուցին, էտրէնէս սէրային մէջ գոցեցին. ուր 5 տարի 8 ամիս կենալին ետեւ մեռաւ» (ն.տ., էջ 71), սուլթան Ահմեդը «Հրաժարեցաւ զոլպաներուն սէպէպով... մէկ քանի տարի գոցուած կենալին ետեւ 67 տարվան մեռաւ» (ն.տ., էջ 71): Սրանցով չեն սպառլում «ակնածանքի», «խանդաղատանքի», «ներբողի» դրսեւորումները (սուլթաններից մէկի «մեռած ատենը քովը ըստակ չիգտնըվեցաւ», 1800, էջ 65, մէկ ուրիշի «սրով իշխան մը քովը մօտիկցաւ դանկով զարկաւ», ն.տ., էջ 66, եւ այլն, եւ այլն):

Անարդարացի է նաեւ իտալական ժողովրդի պատմութեանը «անորոշ եւ լակոնիկ» մի քանի տող նուիրելու մեղադրանքը: Տարբեր առիթներով իտալիան անընդհատ յիշում է, ճիշտ է,

«լակոնիկ», բայց շատ որոշակի տողերով, իսկ իտալացի գօրավար Փրինչիկի Քառլօ-ին, նրա յաղթանակներին անդրադառնում է ամէն առիթի դէպքում՝ առաջին «տետրակում» ընդարձակ կենսագրական ակնարկ տեղադրելուց յետոյ անգամ։ Այս իտալացին վայելում է ինձինեանի առանձնայատուկ բարեհաճ վերաբերմունքը՝ թէ զբաղեցրած ծաւալով, թէ գնահատականների զարմանալի ջերմութեամբ, այդ պատերազմների ճանաչուած զօրավարներ նապոլէոնը, Նելսոնը, Սուվորովը միասին վերցրած Քառլօ-ին տրուած գնահատականների մէկ քառորդին էլ չեն արժանանում։ Սա, այո, քաղաքականութիւն էր, իտալիայի հանդէպերախտագիտութեան դրսեւորում։ Միակ դէպքն է, երբ «յօրինող»-իմբագիրը մի կողմ է դնում առարկայական պատմողի պահուածքը. «Ասոր (Քառլօին, - Գ.Ա.) պարտական է նէմցէստան իր ազատութիւնը», «Կատարեալ վարպետ է զօրապետութեան արուեստին մէջ», «Ունի գութ մեծ իր զօրաց վրայ», «Ուր տեղ հասնի նէ, հոն յաղթութիւն կըլլայ», (1800, էջ 20), «այնպէս մը կապեց պօնաբառդէն, որ կամայ ակամայ խոնարհեցաւ հաշտութիւն ուղեց» (ն.տ., էջ 21), «մտաւ զվիցցէրի երկիրը» (ն.տ., էջ 31), «նեմցէն փոխնչիկի քառլօով կը կառավարուի հիմա» (1802, ա, էջ 38):

«Ոչ մի խօսք բունութիւնների մասին» մեղադրանքը եւ անտեղի է, եւ անարդար։ Մէկ ժողովրդի ներսում խոռովութիւնները դժկամութեամբ է ընդունում «քեֆալօնիայի բնակիչքը երկու բաժնըվեցան։ մէջի պազիրկեաններէն ոմանք Դրեստ եւ Վենետիկ փախան», (1801, Բ, էջ 50)։ Բայց շատ որոշակի վերաբերմունք ունի գաղութային լծից ազատագրուողների հանդէպ, ցաւով է նշում ինքնուրյոնութեան կորուստը։ Ընկերային դժգոհութեան ակնարկներ եւս կան («Օսմանցիի» երկրում Հարկերի եւ Հարկահաւաքութեան նկարագիրն է տալիս՝ ներկայացնելով դաժան բարքեր, բայց առանց վերադիրների, իբրև սառը պատմող։ «Մենզիլիանէնէրուն բնակիչքը ստանալով դուռը շիքայէթ կըդրեն թաթարին ձեռքէն աս բանիս համար» (1800, էջ 45)։ Ո՞ւր մնաց «ոչ մի խօսքը», թուրքերի դէմ ըմբոսատութեա՞ն կոչեր հայերին... Աւելացնենք, որ այլ երկրների մասին իր տեսութիւններում, ինչպէս նաեւ լուրերի հոսքում, ժողովրդական այլ ընդգումների եւս անդրադառնում է։ Դրանց հիմնական պատճառը «ապրուստի նեղութիւնն» է, որը Փիլէմէնկում եւ զվիցցէրիում

«շատ տրտունջ եւ խոռվութիւն» առաջ բերեց (1800, էջ 41): Ֆրանսացիների «տուրք»-այլին ծանր քաղաքականութեան պատճառով «խոռվութիւն եղաւ Միլան քաղաք հացին սղնալուն համար» (ն.տ., էջ 40):

Դժուար է որոշել քաղաքական հայեացքներն այն մարդու, որն իր առջեւ խնդիր է դրել առարկայականօրէն, առանց միջամտելու, տարբեր աղբիւրների օգտագործմամբ շարադրել արդէն կատարուած, երբեմն աւելի քան մէկդարեայ վաղեմութիւն ունեցող իրադարձութիւնները: Այստեղ օգնութեան է հասնում պատմական յարահոս իրադարձութիւններից ու դէպքերից կատարուող ընտրութիւնը, որը բացայատում է ընտրողի համակրանքներն ու հակակրանքները: Բացի այդ՝ որքան էլ սառը շարադրող, խմբագիրը երբեմն-երբեմն թոյլ է տալիս մէկ-երկու կողմնորոշող վերագիր օգտագործելու շռայլութիւն:

Ֆրանսիայի նկատմամբ խմբագիր ինձիմեանը վատ սքողուած հակակրանք է տածում: Դրա պատճառը վերջինիս նուաճողական պատերազմները չեն միայն, որովհետեւ նոյն քաղաքականութիւնը վարող այլ երկրների հանդէպ նոյն վերաբերմունքը դրսեւորում: Պատերազմը ընթանում էր փոփոխակի յաջողութիւններով, բայց «Տարեգրութեան» էջերում աւելի շատ գրտում է իտալացիների (որ հասկանալի է, հեղինակը իտալիայում էր ապրում), անգլիացիների ու ռուսների յաջողութիւնների մասին: ապրում), անգլիացիների ու ռուսների յաջողութիւնների մասին: «Սուվարով մոսկովին մեծ զօրապետը՝ ասոնց դէմ գնաց ըստը-կելու. յունիսի 18, 19 յարձակեցաւ կրուեցաւ փիաչնցա քաղաքին եւ դռպիտիա գետին քով... բոլոր ան խումբը ֆրանսզին աւքաց բութիւն ծորաց եւ չորս զօրապետ գերի բունեց» (1800, բեց, բազմութիւն զօրաց եւ չորս զօրապետ գերի բունեց) (1800, էջ 38): «Ֆրանսպների» նկատմամբ «ինկիլիօ»-ների, «նեմցէ»-ների յաղթանակներն էլ հաճոյքով է շարադրում, իսկ իտալացի զօրավար «Փոխնչիփէ Քառլօ»-ի մղած մարտերը յատուկ ուշադրութեան են արժանանում: Իբրև ճշմարիտ «յօրինող» ֆրանսացիների յաջողութիւններն էլ յիշում է, բայց առանց ոգեւորութեան, աւելի շատ հոլովում են նրանց պարտութիւնները՝ «ֆրանսըզը ոսհմանիէն գիշերանց թողուց փախաւ», «ֆրանսըզներուն սիրուլ լքաւ», ֆրանսացիները իտալացիներից երկու անգամ «չարաչար ծեծ կերան» (այն եղակի դէպքերից է, երբ վերադիրը՝ «չարաչար» բացայատում է նրա վերաբերմունքը), աւելին՝ Ափրիկէի մասին խօսելիս, հաւատարիմ որդեգրած սկզբուն-

Քին, ներկայացնում է երկրամասի պատմութիւնը. շատերն են նուածել այս երկիրը՝ պարսիկները, «Հռոմայեցիք», արաբները, մամլուկները, օսմանցիք, «բայց ասղտար ազդի տակ եղօղը գիտես թէ ֆրանսըզին տակ չիկրնար կենալ» (1802, էջ 75):

Սրա պատճառը ամենայն հաւանականութեամբ ֆրանսիական յեղափոխութեան մէջ պէտք է որոնել նոր միայն «Պօնաբառողէ»-ի ծաւալապաշտական արշաւանքների: Դեռեւս առաջին «տետրակում» հանդիպում ենք Ֆրանսիայի կեանքում կատարուած իրադարձութիւնների արձագանքներին: «Շատ աղէկ գրքերի» հետ «ասանկ ալ շատ անկարգ գրքեր ելան, եւ սուտ իմաստունք՝ որ անկարգութեան եւ անհաւատութեան աղանդը կքարոզէին» (1800, էջ 5): «Ֆրանսըզ ազգը բնութեամբ նետող է», պատմութիւն «կարդացողներուն» յայտնի է այս բնաւորութիւնը. նրանց գրքերը քարոզում են գաղափարներ, որոնք դէմ են ոչ միայն կրօնին, այլև հասարակական կարգին. «Յայտնի եղաւ՝ որ իրենց միտքը չէ թէ միայն հաւատքը վերցնել է՝ այլ նաեւ ամմէն թագաւորները՝ նաեւ ամմէն մեծերը՝ հարուստները» (1800, էջ 6): Թագաւորներին պատժի ենթարկող, եկեղեցական իրաւունքները սահմանափակող, ընդհուպ մինչեւ կրօնն ու հաւատքը մերժող շարժումը, ժողովրդական զանգուածների հուժկու ընդգնումներ (մի տեղ դրանք «ախտ» բառով է բնութագրում), որոնցով այնպէս առատ էր Ֆրանսիայի ժլ դարի վերջին քառորդը, չին կարող արժանանալ «Տարեկըրութեան» խմբագրի հաւանութեանը, որի երազանքը գոյութիւն ունեցող իրականութեան անփոփոխ պահպանումն է խաղաղութեան թագաւորութեան պայմաններում: «Հանգստութիւնը» (խաղաղութիւնը.- Գ.Ա.) սիրելի է, քանի որ «է մայր շահու՝ գիտութեանց եւ արուեստից», «արիւնը ատելի, պատերազմները վախնալու» (1800, էջ 4): Գերադասելի է, որ «ամմէն թագաւորութիւն իր ունեցածը ունենայ. ամմէն պատիկ տէրութիւններ... տեղերնին մնան» (ն.տ.):

Ֆրանսիական յեղափոխութիւնը փլուզում էր խմբագրի այս երազանքը: Դրա համար էլ խոռվայոյզ Փարիզի այդ օրերի հազարաւոր իրադարձութիւններից ընտրում եւ ընթերցողին է ներկայացնում հետեւեալ երկուսը. Փարիզի պատութեան ծառից մէկը թուղթ է կախել, «յորում գրած էր. կեցցէ՛ արքայ» (1800, էջ 27): Պակաս ուշագրաւ չէ, դարձեալ մեկնութեան անկարօտ,

միւս լուրը. «Մէկը փարէզի մէջ Ռուսաստան, Վոլգէռին, եւ Դէլլին՝ արձանները վար ճգեց կոտըրտեց» (ն.տ., էջ 28): «Դեկտեմբերի մէջ պօնափառդէն հազիւ խալսեցաւ մեռնելէն» (1800, էջ 40), - եւ շարադրում է նրա դէմ կազմակերպուած մահափորձի մանրամասները: Իրեն հաճելի են եղել այս լուրերը:

Պատերազմները նոյնպէս խախտում են իրականութեան ներդաշնակութիւնը: Զարմանալի շրջահայեցութեամբ է բացատրում տէրութիւնների յարաբերութիւնները, կատարում համոզիչ վերլուծութիւններ, փորձում յայտնաբերել դրդապատճառները: Իրադարձութիւնները յաճախ այնքան անակնկալ են, չետում է խմբագիրը, որ դրանց «պարագաները, պատճառները չիգիտնաս չիմտածեսնէ, պէտքի տարակուսիս հաւատալու» (1801, էջ 3): Խուլ դժգոհութիւն է դրսեւորում մեծ տէրութիւնների գաղութային քաղաքականութեան դէմ: «Տարին ինկիլիզը կըհանէ անկէց (գաղութային մի երկրից - Գ.Ա.) 500 հազար սուէլին ոսկի» (1801, էջ 34): Մշակութային կողոպուտն էլ նկատում եւ ներկայացնում է. Փարիզում կազմակերպուած մի ցուցահանդէսում «1390 պատկեր կայ դրսի երկրի քաշված», «Հին ամաններ(ի)... մեծ մասը իդալիայէ բերած էին» (1801, Բ, 64):

Առարկայական տեղեկատուութեան այս կերպը սխալ մեկնութեան տեղիք է տուել. «Գաղութային պատերազմների եւ վայրագ քաղաքականութեան մասին ոչ մի քննական խօսք չի ասում ինձինեանը»⁴: Հնդկաստանում կատարուած դէպքերը, օրինակ, նկարագրում է առանց մեկնաբանութիւնների, բայց շարադրանքը ընթերցողին է հասցնում խմբագրի դժգոհութիւնն այն բանից, որ այստեղ տիրութիւն անողը «ինկիլիզի ընկերութիւնն» է. «Անոնք անոր (թագաժառանգի - Գ.Ա.) մէկ ազգականը թագաւոր դրին. քիչ մը ատենէն ետքը աս թագաւորն ալ հրաժարել տըվին... անանկով ընկերութիւնը բոլոր զափիթ ըրաւ» (1802, Փետրուար, էջ 9): «Թագաւոր դրին», «Հրաժարել տըվին», ընկերութիւնը «զափիթ ըրաւ», - ժողովրդի կամքի ու ցանկութեան մասին խօսք անգամ չկայ, ժողովուրդը խաղից դուրս է: «Տըվինք, առինք, կամ փոխադրեցինք մէկմէկու աս ահթնամէով» (1801, Բ, էջ 17), սա է մեծ տէրութիւնների խօսելու ոճը, որ դուրս չի գալիս ինձինեանին: Այս առումով շատ աւելի բնորոշ է

4 ԿԱՐԻՆԵՍՍՆ Ա., նշ. աշխ., էջ 105:

անգլիացի խորհրդարանականի խօսքը. «Նարզալին եւ Փօրդուկալը տեղերնին դարձուցինք. իուլանտան մեզի հետ միացուցինք. Հնտստան դիբուս սահիպին երկիրը առինք. ճեաքօպինութիւնը գետինը կործանեցինք»... (1801, Բ, էջ 44): Միակը, որ համահունչ էր խմբագրի ցանկութիւններին, «Ճեաքօպինութիւնը» կործանելու իրողութիւնն է: Իրենց նուաճած երկրներում նշանակուած դեկավարները պէտք է «նաեւ իրենց հաճոյ լինեն»: Նման վերաբերմունքի բացակայութիւնն է, հաւանաբար, պատճառը, որ առանձին համակրանքով է ներկայացնում իր սիրելի հերոսի՝ իտալացի զօրավար Փոխնչիփէ Քառլօ-ի «Թուղթը» իր նուաճած «զվիցցերիի երկրի» բնակչութեանը, որի մէջ պարտաւորուում է «ան կառավարութիւնը սահմանելու՝ որն որ ժողովուրդը կը հաւնի»:

Մեծ տէրութիւններն իրենց ուզածը անում են՝ «մէկ մահանայով... կպարտաւորեն»՝ յաճախ խտրութիւն չդնելով միջոցների միջեւ. «Ֆրանսըզը՝ վախցօղն ալ բարեկամն ալ քիչ մը խաբելին ետեւ, տակը առաւ կողոպտեց» (Խտալիան.- Գ.Ա.)՝ «ուզածը ըրաւ» (1800, էջ 7): Բոլորին առաջնորդում է սեփական շահը: «Պրուշի թագաւորն ալ անդտար հարկաւոր եւ շահաւոր սեպեց աս դաշնակցութիւնը, որ ինքն ալ անոր ույսիշ եղաւ» (1801, էջ 32), շատ աւելի բնութագրական է շվէդների դեսպանի զբոյցը «ինկիլիպի» դեսպանի հետ. «...Դուք մոսկովին հետ հիմա նիզա ունեցաք մալդախին վրայ. մեզի հետ նիզանիդ ի՞նչ» (1801, էջ 35):

Մեծ նշանակութիւն տալով պետութիւնների միջեւ կնքուող դաշնագրերին, պարբերականի էջերում յաճախ է տեղ յատկացնում դրանց հրապարակումներին: Դաշնագրերը ընթերցողներին հնարաւորութիւն են տալիս աւելի լաւ հասկանալու պետութիւնների փոխյարաբերութիւնները. «Աս տարի կընայ ըսվիր դաշնակցութեան տարի,- հաւաստում է խմբագրիրը «քաղաքական վիճակ աշխարհիս» բաժնում՝ շարունակելով,- մէկը սալթթագաւորաց դաշնակցութիւնները իմանայնէ, իրենց օրինաց ծուծը եւ աղքիւրները կիմանայ. անոր համար հոս մէկիկ մէկիկ կըդնենք որ մեր ընթերցողը քիչ բանով մը սանքի մեծամեծ հատոր թագաւորաց օրէնքները կարդացածի չափ կըլլայ» (1801, Բ տետրակ, էջ 1): Ոչ միայն այս. խմբագրիրը չի մոռանում, որ իր ընթերցողները բազում զբաղմունքի եւ մասնագիտութիւննե-

ըի տէր մարդիկ են եւ աշխատում է բաւարարել նրանց պահանջները եւս: Այսպէս, օրինակ՝ «Շվետի թագաւորի» եւ «բոլոր Ռուսիոյ» կայսեր միջնեւ կնքուած պայմանագրի կէտերից մէկը պարտաւորեցնում է արգելել ապրանքների մուտքը («ապրանք չխտանին») այն երկրներ, որոնք «հիմա կամ ետքը կռուի մէջ կըլլան» (1801, Բ, 6): Եւ որպէսզի ընթերցող վաճառականները «ծուռ» չհասկանան, շտապում է թուարկել ռազմական այն ապրանքները, որոնք արգելում են: Այս յիշատակումը անում է, որպէսզի չխախտուեն «առուտուրի եւ նաւարկութեան ազատութիւնը» (ն.տ.): «Տարեգրութեան» էջերում յաճախ են յայտնւում նիւթեր, որոնք հասցէագրուած են «մեր ազգին վաճառականներուն» օգտակար լինելուն: Ստամբուլից ձգուող առեւտրական ճանապարհներն է ներկայացնում (Ստամբուլ-Բաղդադ, Ստամբուլ-Հալէպ)՝ նշելով հանգստեան կայանների, հիւրանոցների («խօնախներու») հեռաւորութիւնը՝ «իրենց սահաթներով»: Կողմնորոշելու համար բերում է լրացուցիչ տեղեկութիւն. «ստանպօլէն ինչուան Հալէպ 750 միլ է. թաթարը աղէկ ատեն 10 օրուան մէջ կրնայ երթալ» (1802, Բ, էջ 76): Նոյն նպատակով ներկայացնուած են նաեւ «հողմերի անունները»՝ տաճկերէն, իտալերէն, «Փիլեմերէն», հայերէն: Այնուամենայնիւ, վաճառականների խնդիրները այստեղ աւելի քիչ են հաշուի առնւում, քան «Ազդարարում»:

Չուկաս ինձիճեանը թերեւս առաջինն է, որ անդրադառնուած է Ռուսաստանին Վրաստանի միացմանը՝ իր գնահատականներում դրսեւորելով քաղաքական կողմնորոշում: «Ազդարարի» նման, թէեւ ոչ «Ազդարարի» հետեւողականութեամբ ու ընդգծումով, «Տարեգրութիւնն» էլ անթաքոյց համակրանքով է արտայայտուած Մոսկովի թագաւորութեան հանդէպ, քննադատական վերաբերմունքի ոչ մի արտայայտութիւն: Հստ ինձիճեանի Վրաստանն իր հովանու տակ առնելով Ռուսաստանը դրսեւորել է լայն մարդասիրութիւն, ինչպէս եւ առաջնորդուել է կրօնական համակրանքներով. «Մեր հաւատքը ունին, եւ սէր ունինք կրուսինիայի ժողովրդեան վրայ»,- հաճոյքով մէջբերում է ցարի խօսքերը (1801, Բ, էջ 48): Պատմական իրողութեան նկատմամբ խմբագրի հաւանութիւնը մի ուրիշ ակունք էլ ունի՝ միացուած երկրի քաղաքացիները ուուսներին հաւասար կը վայելեն մեծ երկրի քաղաքացիների իրաւունքները, կը պահպանուեն վրացա-

կան սովորոյթները, «արտօնութիւնները, եւ ինչքը»: Ամէն ինչից զգացւում է, որ խմբագիրը նոյնպիսի մի ելք կ'ողջունէր նաեւ Հայաստանի համար:

Ուշագրաւ է ընկալումը այն պատճառների, որոնք ստիպեցին «Կիւրճիի» «Գէորդ խան» թագաւորին դիմելու այդ քայլին: Երկիրը քայլայուել էր հարեւանների դէմ մղած անյաջող պատերազմներից («Քովիններուն հետ» կոիւները «միշտ դժբաղդ եղեր էր») եւ ներքին տեւական երկպառակութիւններից («... բուն իր տանը մէջ տարածայնութիւն կար» (1801, Բ, էջ 47)): Վերջին պարագան շատ է վշտացնում խմբագրին: Ընդհանրապէս միշտ էլ զսպուած ցաւով է արձանագրել ներքին անհաշտութիւնների կործանարար նշանակութիւնը ժողովրդի համար: «Աս իրենց մէջի (խօսքը հնդիկների մասին է.- Գ. Ա.) խոռվութիւնը ինկիլիգին շատ յաջողութիւն պիտոր տայ իրենց վերայ տիրելու» (1801, Բ, էջ 57):

Զթաքցուած ցաւ կայ վրացական ինքնուրոյն թագաւորութեան վերացման փաստում: «Ասանկով աս տարի վերջացաւ աս թագաւորութիւնը՝ որ հնուցմէ պէրի եկած էր» (1801, Բ, էջ 48): Թուրքիայի մասին պատմական ակնարկում, կարծես ի միջի այլոց, յիշում է. «Իրեն տակը ունի շատ ազգ եւ երկիր, որք ի հնումն էին թագաւորութիւնք» (1800, էջ 10): Ցաւ կայ նաեւ այն յիշատակման մէջ, թէ «մոսկովները հիմա իրեք երկիրնալ՝ այսինքն կիւրճիսթան, պաշ աչըն, եւ մնկոէլ՝ մէկ անունով կոչեցին Կրուսինիա» (ն.տ.): Առիթն օգտագործելով նաեւ բացարում է, թէ ինչու վրաց թագաւորութիւնը աւելի երկար յարատեւեց. «Եւ տեղը յարմար ըլլալով՝ աւելի քշեց քան զհայոցը» (ն.տ.):

Ինձինեանի դիւանագիտական քաղաքականութիւնը դրսեւորւում է յատկապէս կրօնական խնդիրներում: Նա չէր կարող չարձանագրել, որ Եւրոպան «ունի մէկ մեծ եկեղեցական իշխանութիւն՝ Հռոմայի տէրութիւնը»-ը (1800, էջ 9): Մի ուրիշ տեղ ընթերցողներին է հասցնում Մոսկովի Պօղոս թագաւորի մօր՝ Կատարինէի բարեացակամ վերաբերմունքը «Հռոմայու քահանայապետի» նկատմամբ: Շատ աւելի ուշագրաւ է, սակայն, Հռոմի պապի եւ Բոնապարտի յարաբերութիւնների մեկնաբանութիւնը: «Ֆրանսային հռոմայու հետ միաբանութիւնը» դիտում է 1801թ. «Եկեղեցական վիճակի» երկու կարեւոր իրադարձութիւններից

մէկը: Զմոռանանք, սակայն, որ այդ միաբանութեանն անդրադառնալուց յետոյ նապոլէոնի խօսքից շատ կարեւոր մի մեջբերում է կատարում, որը նաեւ իր համզողումն է. «Տասը տարվան իմ փորձս սորվեցուց ինծի՝ որ ամմէն կառավարութեան հարկաւոր է մէկ կրօն մը. եւ 16 դարուց պատմութիւնը կըցըցընէ ինծի՝ որ ուղղափառ կրօնը ամմէնէն յարմար է Փրանսայի. որ կրնայ երջանիկ ընել զՓրանսզները. 30 միլիոն բնակչաց մէջ՝ 24 միլիոնը ուղղափառ կրօնը կուգեն» (1801, Գ, 4-5): Առանձնակի ջանասիրութեամբ ներկայացնում է նաեւ Հռոմի եկեղեցու հետ նոր յարաբերութիւնների շուրջ Ֆրանսիայի հոգեւորականութեան շրջանում ծագած դժողութիւններն ու երկապառակութիւնը: Ու թէեւ տարբեր առիթներով բարձր է գնահատում Յիսուսեանների կրթական գործունէութիւնը, այնուամենայնիւ դժուար է բաժանել հետազօտողի տեսակէտը, թէ «հանրամատչելի հայերէն «Տարեգրութեան» մէջ ինֆորմացիոն ակնարկը բառաջազրւում էր բաւական որոշակի կերպով կաթոլիկ եկեղեցու ուղեգծի պաշտպանութեան ու հիմնաւորման նպատակով»⁵: Ինձիճեանի հաղորդումների ենթատեքստը բոլորովին էլ չի հաստատում Ա. Կարինեանի եղրակացութիւնը, նա պարզապէս տուրք է տալիս ընդունուած սխալ տեսակէտին:

Հանդէս գալով միջնադարի աւարտի եւ նոր ժամանակների սկզբնաւորման սահմանագծում, «Տարեգրութիւնը» կրում է երկու աշխարհազգացումների կնիքն ու դրոշմը. պարբերականը մի ուսքով ամուր յենուած է միջնադարին, միւսը պարզել է դէպի նոր դար: Ժողովրդի լուսաւորութիւն կրթութեան միջոցով, սա է նրա սկզբունքը, որն էլ պայմանաւորում է հասկանալի լեզուով գիրք ու դպրոց ունենալու անհրաժեշտութիւնը:

Խմբագիրը «ազգը պայծառացնելու» երկու հիմնական միջոց է մատնանշում բանալ «ուսմանց դպրատուններ» եւ «յարմար... գրքել հանել» (1801, Գ, էջ 6): «Տարեգրութիւն» ինքը կոչուած էր հէնց այդ խնդիրներին ծառայելու: Աւելացնենք, որ յիշեալ հարցերի նկատմամբ տէրութիւնների ու նրանց առաջնորդների վերաբերմունքով էլ չափում է նրանց գործունէութիւնը: Գովեստով է խօսում «Զինումաչինի թագաւոր քին չօնկ»-ի մասին՝ «գիտուններու խիստ պաշտպան եղաւ», Մոսկովի Պօղոս

⁵ ԿԱՐԻՆԵԱՆ Ա., նշուած աշխատութեան մէջ, էջ 119:

թագաւորը շատ դպրատուններ բացեց։ Աւելին՝ ուսումնական փոխադարձ կապերը նպաստում եւ ամրացնում են յարաքերութիւնները այն երկրների, «որ քաղաքականութիւն ունին»։ Օրինակը Ֆրանսիան եւ իսպանիան են, որոնք վաղուց «կապ բարեկամութեան ունին ուսման մէջ», որը հովանաւորում է երկու տէրութիւնների կողմից հաւասարապէս։ «ասով երկու ազգին սէրը մէկ մէկու վրայ» շատացնում են (1801, Դ, էջ 13):

Տպագիր խօսքի նկատմամբ մեծ սէրն է, թերեւս, պատճառը, որ «Տարեգրութեան» երկու տարուայ համարներում ընդարձակ մի նիւթ է տպագրում գրի ծագման, անցած ճանապարհի մասին՝ տեղ-տեղ յիշելով հայերի մասնակցութիւնը եւս։ Ընդհանրապէս հայոց պատմութեան ու մշակոյթի խնդիրներին անդրադառնում է այլ ժողովուրդների համանման իրողութիւններ քննելիս։ Գրի գիւտի, գրաւոր խօսքի զարգացման ընթացքը «գրասէր եւ էրուգիտ», «բազմահմուտ խմբագիրը» (Ա. Կարինեան) ներկայացնում է խիստ մանրամասնօրէն՝ պատկերագրից («զարմանալի պատկերներ») ու «չուանէ հանգոյցներ»-ից մինչեւ ձեռագիր ու տպագիր գիրք։ «Մանր գրերը» նկարագրելիս հարկ է համարում յիշել՝ «Ասանկ մանր գիր գրելու մեր ազգէն Ստանպօլու դպրաց մեջաւ ծաղկեցան ոմանք» (1802, Բ, էջ 83)։ Գրքի տպագրութեան կատարելութեան հասաւ «Օլանտա որ է Ֆիլէմէնկ»), որտեղ «գեղեցիկ գրերով եւ աղէկ թղթով շատ հեղինակներու գործք տպվեցան», դրա համար «հաիւ տպագրութիւն հանողներնալ Փիլէմէնկ գացին փորել տըլին էն աղէկ հաիւ գրերը ետքը ուրիշ տեղերալ զարդարվեցան» (1802, Բ, էջ 87)։ Մածկագրութիւնը մեզնում էլ ընդունուած է եղել (ն. տ. էջ 94):

Հակառակ «Ազդարարի» լեզուին, որ գրաբարն էր, «Տարեգրութիւնը» որդեգրում է «աշխարհաբառ»ը, որին ինձիճեանը աւելի վաղ էր դիմել։ Ազգային պետութիւնների յարատեւութեան, ազգային լեզուների բարգաւաճման կողմնակիցն էր «Տարեգրութեան» խմբագիրը։ Ընթերցողներին հաղորդելով, որ գիտնականները մտահոգ են բոլոր ժողովուրդներին մատչելի «ընդհանուր նշաններ»-ով լեզու ստեղծելու, որը մարդկանց, վաճառականներին առաջին հերթին (սա խմբագրի ընդգծումն է-Գ.Ա.), կ'ազատի լեզուներ սովորելու վրայ շատ ժամանակ վատնելուց, ներքին բաւականութեամբ շեշտում է։ «Հիմա ամմէն ազգիրենց լեզուով գրելու հետ են» (1802, Փետրուար, էջ 17)։ Պոլսի

բարբառն է ընկած պարբերականի լեզուի հիմքում՝ անհարկի խճողուած թուղթերէնից, այլ լեզուներից ու բարբառներից փոխառեալ բառերով, երբեմն՝ անհասկանալիութեան չափ։ Մի քանի նմոյշ. «Մէկ ծովու օրէնք մը խուլանմիշ կըլլայ, որ քէֆինէ է. հիշ ույմիշ չըլլար» (1801, էջ 32), «Մարտի 28-ին նաբօլին եւ ֆրանսգը պարը ըրին. նաբօլին մարդը միշու կըսվէր որ Մոսկովի թագաւորին քոլօնէլլօ էր. ֆրանսըզին ալգվիէռ» (1801, Բ, էջ 23), «Փետրիվ. մէջ ինկիլդեռուա սկսաւ խոսվիլ գառնադիկի նապապին տղոց տավան» (1802, Փետրվար, էջ 8), «Մօտիկ Կէմօնտապ ըսած տեղը Աւսդրիոյ մէջ նոր թիւլիւ մը ֆուռուն շենք էր պիոռայի համար» (1802, Յունուար, էջ 39): Այս վերջին նախադասութեան համար փակագծերում աւելացնում է՝ «որ խմելիք մըն է», որից կարելի է կուահել, թէ «պիոռան» գարեջուրն է...»

Բանասիրութիւնը այսօրուայ ըմբռնումով, իբրեւ նեղ մասնագիտութիւնների համախումբ, ուշ շրջանի երեւոյթ է: Ղուկաս ինձինեան-խմբագրի համար այն դեռեւս «ամենայն ուսմանց» տրուող անուն է, որով հասկացում է այն, ինչ հասկանում են «եւրոպացիք» «լէդէռադուուա» ասելով (1801, Դ, էջ 11): 1802-ի «Տարեգրութեան» չորրորդ՝ «բանասիրական վիճակ աշխարհիս» բաժինը այդ իսկ պատճառով բազում ենթաբաժիններ ունի՝ «գիտութիւնք», «աստղաբաշխութիւն», «աշխարհագրութիւն», «բնաբանութիւն», «նորանշանք», «բժշկութիւն», «վարք» (որեւէ տէրութեան դեկավարի), «մէտէորականք», նոյնիսկ՝ «գուշակութիւն» յաջորդ տարուայ:

Նոյն կերպ տարրորոշուած չէ «արհեստի» բաժինը եւս: Ինչպէս միջնադարում այս եզրը նշանակում է եւ արուեստ, եւ արհեստ, որ ներառում է անդամ վաճառականութիւնը («արուեստից մէջ ամմէնէն շահաւոր է վաճառականութիւն»), թէեւ նշում է միւսներից ունեցած տարբերութիւնը եւս. «ուրիշ» արուեստներ մասնաւոր են, իսկ աս «ընդհանուր է. ամմէն ազգ կըբանեցնէ ու կըշահի» (1801, Բ, էջ 66): Պատերազմներն ու խոռվութիւնները առաջին հերթին սրան են վնաս հասցնում: Արուեստ բաժնում կողք-կողքի ներկայացնում են ծաղկում ապրող «ձեռագործ»-ութիւնը, «պատկերահան»-ութիւնը, «չուխա շինելու արուեստը» եւ «Շատով անուն քանդակործ երեւելի»-ն (որի նշանաւոր մի աշխատանքը «կանդնեցուցին Պէոլին քաղաքը, հա-

սարակաց պաղչախն մէջ», 1800, էջ 48), նկարչութիւնը, միւս արուեստները: Խմբագիրը ուղիղ կապ է տեսնում հասարակական-քաղաքական կեանքի եւ արհեստ-արուեստների զարգացման միջեւ: «Ետքի ատենները» արուեստների զարգացման ոլորտում ֆրանսիայի ետ մնալը բացատրում է պատերազմով եւ «իրեն ազգին խռովութեան պատճառաւ» (1801, Բ, էջ 63), իսկ նոյնի ծաղկումը Անգլիայում՝ սրանց տարած յաղթանակներով:

«Ազդարարի» համեմատութեամբ հարուստ չէ «Տարեգրութեան» ժանրային պատկերը: Այսօրուայ չափանիշներով առաջնորդուելիս պարբերականի էջերում կարելի է նկատել տեղեկատուութեան այսպիսի կերպեր առաջնորդող, քաղաքական եւ միջազգային տեսութիւն, լուր, ակնարկ-դիմանկար, գիտական յօդուած (տարբեր բնագաւառներից), աշխարհագրական (այլ բնագաւառների եւս) զրոյց, պատմական ակնարկ, մահախօսական, կենսագրութիւն (վարք), հետաքրքրաշարժ նորութիւններ, դէպքերի, թագաւորների գահակալութեան ժամանակագրական պատմութիւն... Խմբագիրն, ի հարկէ, յատուկ ժանրային քաղաքականութիւն չի վարում, յիշեալ ժանրերը օգտագործում են ըստ նիւթի թելադրութեան...

«Ազդարարի» հետ միասին «Տարեգրութիւնը» հայոց տեղեկատութեան դաշտում ազդարարում ու տարեգրում էր սկզբունքներ, որոնք աւանդութիւն էին դառնալու յետագայ լըջանի հայ մամուլի համար: